Ավետիք Իսահակյան

Օխտը սարով հեռո՞ւ քեզնից

Օխտը սարով հեռո՞ւ քեզնից,
Քու շրվաքով ապրում եմ, յա՛ր.
Օխտը տարով բաժան քեզնից,
Քու կարոտով էրվում եմ, յա՛ր.
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Կյանք ու արև յարը՞ս ո՞ւր է:

Գիշեր-ցերեկ զրկված քընից՝
Ծով է կըտրում աչքըս ճամփին,
Բալի դարիք մի ճամփորդից
Կարոտ յարիս խաբարն առնիմ.
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Թագ ու պսակ յարը՞ս ո՞ւր է:

Օխտը տարի ծում ու պասով,
Օր ու արև սևցուցի, յար.
Բալի Մըշու Սուլթան զորքով՝
Իմ մուրազս տար ինձի, յար:
Դարդիս դարման, յարիս մահլամ,
Թև ու թիկունք յարը՞ս ո՞ւր է…

1892
Ապարան